



23 Տարբեր 2011 թ

N 687 - Կ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշման 18 կետի 4-րդ ենթակետը և նպատակ ունենալով կանոնակարգել հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակի տրամադրման գործընթացը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակի տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչությունների պետերին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ապահովել հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակի տրամադրումը սույն հրամանի հավելվածով սահմանված կարգին համապատասխան :

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ



Կ Ա Ր Գ

Հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակի տրամադրման

1. Սույն կարգով կանոնակարգվում է հարկ վճարողի կողմից պահանջվող՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի կրկնօրինակի (այսուհետ՝ կրկնօրինակ) տրամադրման գործընթացը:
2. Հարկային մարմինը կրկնօրինակ տրամադրում է իր մոտ հաշվառված անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, նոտարներին, դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպություններին:
3. Հարկ վճարողի կողմից պահանջվելու դեպքում, հարկային տեսչության սպասարկման գործառույթն իրականացնող բաժնի իրավասու աշխատակիցը (այսուհետ՝ իրավասու աշխատակից) մեկ աշխատանքային օրում պատրաստում է կրկնօրինակ, որի վերին աջ անկյունում նշվում է «կրկնօրինակ» բառը:
4. Կրկնօրինակի ստացման համար հարկ վճարողը կարող է դիմել երեք եղանակով՝
 - ա) փոստով,
 - բ) էլեկտրոնային եղանակով,
 - գ) ներկայանալով հարկային մարմին, որի դեպքում գրավոր դիմում ներկայացնելը պարտադիր չէ:
5. Հարկային տեսչության պետի կողմից կնքված և ստորագրված կրկնօրինակը, հարկ վճարողի ընտրությամբ, կարող է տրամադրվել՝
 - ա) առձեռն,
 - բ) փոստով,
 - գ) էլեկտրոնային եղանակով:
6. Սույն կարգի 5-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով կրկնօրինակը տրամադրվում է տվյալ հասցեի առկայության դեպքում:
7. Հարկ վճարողին կրկնօրինակն առձեռն տրամադրելու դեպքում, իրավասու աշխատակիցը ստուգում է հարկ վճարողի (նրա ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի առկայությունը, իսկ ներկայացուցչի դեպքում՝ նաև լիազորագրի առկայությունը: Լիազորագրի մեկ օրինակը պահպանվում է հարկ վճարողի ամփոփ հարկային գործում:

8. Հարկ վճարողին կրկնօրինակ տրամադրելու վերաբերյալ իրավասու աշխատակիցը կազմում է տեղեկանք, դրա ստացման (տրամադրման) եղանակի, ամսաթվի, իսկ առձեռն ստացման դեպքում նաև ստացողի վերաբերյալ նշումով և մեկ աշխատանքային օրում՝ հարկ վճարողի ամփոփ հարկային գործում պահպանման նպատակով, փոխանցում հարկային գործերի պահպանման (արխիվացման) համար պատասխանատու աշխատակցին: